ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 13 >> Հոկտեմբեր 2018թ. N 148

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N6 արձանագրային որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի N698-Ա որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի N701-Ա որոշման 6-րդ կետի ''Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ /օժանդակ/ դպրոց''և ''Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ /օժանդակ/ դպրոց'' պետական ոչ առևտրային կազմակերպություններում սովորող աշակերտների հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը ապահովելու պահանջների, առաջացած խնդիրներին տեղում ծանոթանալու, նրանց լուծմանը աջակցելու և մասնագիտական խորհրդատվություն իրականացնելու նպատակով

կարգադրում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին(Ա. Ապիտոնյան)՝ կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Աշխատանքային խմբին(Ա. Ապիտոնյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 13.11.2018 12:39:22 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

ՄԱՐԶՊԵՏ՝
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի 2018թ.
թվականի նոյեմբերի -13----ի
N -148- կարգադրության

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Ապիտոնյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Անդամներ՝

Ն. Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Ռ. Համբարձումյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Ղարիբյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ
Գ. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ
Մ. Սեդրակյան	<< Հույսի Մեծամոր>> հասարակական կազմակերպության տնօրեն, <<Արևածագ >> կենտրոնի համակարգող / համաձայնությամբ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալության մասնագետ ըստ սպասարկման տարածքի

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.11.2018 11:33:58 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217